

Ամփոփումներ

Վերամտնի տիպի Հաղամարի արագ ալգորիթմներ
Ա. Ժ. Անոյան

Աշխատանքում մշակված են Վերամտնի տիպի Հաղամարի արագ ալգորիթմներ, որոնք հիմնված են նշված տիպի մատրիցների բլոկային ներկայացման վրա:

Հիրքիդ ֆիլտրի կառուցումը ընդարձակագրած
B-սպլայնինգի միջոցով
Հ. Ռ. Շուրպյան

Հռոկվածում դիտարկվում են հիրքիդային (գծային, ոչ գծային) ֆիլտրեր: Առաջարկվում է նշված ֆիլտրերի կառուցման ալգորիթմ, որը հիմնված է մոր տիպի B-սպլայն ֆունկցիաների վրա: Մշակված է սպլայն-մեդիանային ֆիլտրացիայի ալգորիթմ, որը կիրառվել է գառայան աղմուկով աղտոտված ազդանշանների վրա:

Հաղամարի ձևափոխության միջոցով կոդավորման մի մեթոդի մասին
Ա. Ժ. Անոյան

Աշխատանքում դիտարկվում է կոմպակտ պրոյեկտորներով կոդավորման մեթոդ և մշակված է Հաղամարի ձևափոխությամբ ապակոդավորման մեթոդ:

Պատկերների բլոկային ֆիլտրացիայի համակարգ,
որը հիմնված է զուգահեռ աշխատող ունիֆիկացված զուգահեռ պրոցեսորների վրա
Ա. Պ. Գալանտերյան

Դիտարկված է գծային ֆիլտրացիայի մեթոդը: Առաջարկված է պատկերների բլոկային ֆիլտրացիայի համակարգի մոդելը, որը հիմնված է զուգահեռ աշխատող ունիֆիկացված լուգահեռ պրոցեսորների վրա: Մոդելը հնարավորություն է տալիս սինխրոնիզացնել պատկերների մշակումը անկախ մշակվող բլոկների չափսերից: Ընդ որում, հաշվի են առնվում օգտագործողի անհատական պահանջները, և սարքավորումները օգտագործվում են բարձր աստիճանի ծանրաբեռնվածությամբ:

Գծային հավասարումների համակարգի բացառման ընդհանրացված մեթոդներով ստացված լուծման մի հատկության մասին
Կ. Ա. Թումյան, Ա. Դ. Տունիկ

Եղինակներն իրենց աշխատանքում օրինակի վրա ցույց են տալիս գծային հավասարումների համակարգի բացառման ընդհանրացված մեթոդներով ստացված լուծման միատկություն, որն գիտական հետաքրքրություն է ներկայացնում նաև գծային ծրագրավորման մեջ:

Անորոշության պայմաններում գծային ծրագրավորման մի խնդրի մասին
Մ. Ա. Թումյան

Դիտարկվում է հավանականային գծային ծրագրավորման մի խնդիր (ելակետային ուղղվելը կրում են պատահական բնույթ): Խնդիրը լուծվում է ներքին կետերի սինպլեքս երդրի գաղափարի օգնությամբ:

**Հատուկ տիպի երկկողմանի գրաֆների միմիմալ միջակայքային
կողային ներկման մասին
Ռ. Ռ. Զամայան**

Գտնված է երկկողմանի գրաֆների մի դասին պատկանող գրաֆների միջակայքային կողային ներկումներում մասնակցող գույների միավազումը հնարավոր քանակի գնահատական:

**Լայնասփյուռ կապուղու E-ունակության տիրույթի
պատահական կողավորման գնահատական
Մ. Ե. Հարությունյան**

Ուսումնասիրված է առանց հիշողության լայնասփյուռ կապուղին ընդհանուր դեպքում: Կառուցված է E-ունակության տիրույթի ներքին գնահատական սխալի մաքսիմալ և միջին հավանականությունների դեպքում:

**Ճյուղավորված հաղորդակցական համակարգի
արագություն-հուսալիություն-շեղում և ըստ շեղման չափանիշի մասնակի
գաղտնիություն տիրույթի վերաբերյալ
Ե. Ա. Հարությունյան, Ա. Ն. Հարությունյան, Ա. Ռ. Ղազարյան, Ե. Վան դեր Մյոլեն**

Ձեռնարկվում է աղբյուրի կողավորման խնդիրը միաստիճան ճյուղավորված կապի համակարգի դեպքում: Ցամառտուռի կողմից ձևակերպված այդ խնդիրը ընդհանրացված է մի շարք ուղղություններով: Կառուցված են հուսալիության, շեղման և գաղտնիության մակարդակներից կախված հասանելի արագությունների տիրույթի ստորին և վերին գնահատականներ: Գաղտնիության չափանիշ է ընտրված շեղման ֆունկցիան: Դիտարկված են մի շարք կարևոր մասնավոր դեպքեր:

**Հաջորդական ճշգրտումը հուսալիության չափանիշի ներքո
Ա. Ն. Հարությունյան**

Առաջարկվում է իմֆորմացիայի հաջորդական ճշգրտման ընդհանրացված սահմանում, որն հիմնված է հաղորդակցական համակարգում հուսալիության (սխալի հավանականության ցուցչի) դիտարկման վրա: Ապացուցվում է դրա հնարավորության վերաբերյալ ամերիաժեշտ և բավարար պայման, ենթադրելով, որ երկմակարդակ համակարգի յուրաքանչյուր հասցեատեր հուսալիության մկատմամբ ներկայացնում է միևնույն պահանջը:

**Կռահումն ըստ շեղման և հուսալիության չափանիշների
Ե. Ա. Հարությունյան, Ա. Ռ. Ղազարյան**

Ձեռնարկվում է դիսկրետ առանց հիշողության աղբյուրի հաղորդագրությունների կռահման խնդիրը հուսալիության մկատմամբ լրացուցիչ պայմանի դեպքում: Որոշված են շեղման ու հուսալիության պահանջվող մակարդակներն ապահովող կռահման փորձերի փոքրագույն թվի համապատասխան կռահումների սպասելիի արժեքը:

**Ժողովրդագրական կառուցվածքի գնահատումը մահացության
ցուցանիշների փոփոխությամբ
Ե. Ա. Հարությունյան, Հ. Ա. Շահումյան**

Աշխատանքում ներկայացվում է մի ամուրդակի վիճակագրական եղանակ, որը հնարավորություն է տալիս բավականին ճշգրիտ գնահատել ՀՀ բնակչության քանակը և

համընդհանուրությունից բացակայող քաղաքացիների թիվը: Որպես օրինակ հաշվարկվել է 1995-ից 1999 թվականներին Հայաստանում առկա և բացակայող բնակչության ոչ միայն ընդհանուր թվաքանակը, այլև բաշխումը ըստ սեռի, տարիքի և բնակավայրի:

(*n,4,2*) օպտիկալ օրթոգոնալ կոդերի կառուցում
Ս. Ս. Մարտիրոսյան

Դիտարկված են օպտիկալ օրթոգոնալ կոդեր, երբ մաքսիմալ կոռելացիան հավասար է երկուսի: Մտացվել է նոր կոմստրուկցիոն եղանակ (*n,4,2*) օպտիկալ օրթոգոնալ կոդերի համար:

Հավանական սխալներ ուղղող կոդերի մի դասի կառուցում
Ս. Ս. Մարտիրոսյան

Դիտարկված է սխալներ ուղղող կոդերի նոր դաս: Պարամետրերի որոշ արժեքների համար ստացվել է կոմստրուկցիոն եղանակ, որի միջոցով կառուցվող կոդերի հզորությունը գերազանցում է հայտնի սխալներ ուղղող կոդերի հզորությունը:

***k*-տրոհելի բազմության հզորության կամ կատարյալ հաշ ընտանիքի վերին նոր
գնահատական և օպտիմալին մոտ նոր կոմստրուկցիա**
Ս. Ս. Մարտիրոսյան, Ս. Ս. Մարտիրոսյան

Ներկայացված է *k*-տրոհելի բազմության կամ կատարյալ հաշ ընտանիքի համար նոր կոմստրուկցիոն եղանակ, որը տալիս է գրեթե օպտիմալ կոդեր: Մտացվել է վերին գնահատական, որն ավելի լավն է, քան մինչ այդ հայտնի գնահատականները: Տրված է նաև մեկ այլ կոմստրուկցիոն եղանակ պարամետրերի փոքր արժեքների համար:

**Էական ենթաբանաձևերի բազմության հզորությունը Ֆրեզեի արտածումներում և
տեղադրման կանոնով Ֆրեզեի արտածումներում**
Ա. Ա. Չուրախյան

Հոդվածում գնահատվում է Ֆրեզեի համակարգերում և տեղադրման կանոնով Ֆրեզեի համակարգերում սևեղծված *n* քայլերով արտածվող նույնաբանությունների էական ենթաբանաձևերի մաքսիմալ հասանելիք հզորությունը: Ապացուցված է, որ Ֆրեզեի համակարգերում այն ունի գծային գնահատական, իսկ տեղադրման կանոնով Ֆրեզեի համակարգերում էքսպոնենցիալ կարգի է, ինչը ընդգծում է տեղադրման կանոնի ևս մեկ հետքերի հասկությունը:

**Ունարներում աստիճանացուցչային ֆունկցիայի ներկայացվելության
մի պայմանի վերաբերյալ**
Ա. Ա. Սողոյան

Հոդվածում ներկայացված է աստիճանացուցչային ֆունկցիայի ունարներում (ինդուկցիայի արքիմեդին բավարարող վերջավոր հանգումակներում) ներկայացվելու հնարավորության անհրաժեշտ և բավարար պայման, որն արտահայտված է Էյլերի ֆունկցիայի մի շարք հատկություններով օժտված $A(n)$ ֆունկցիայի միջոցով:

Ֆիկլի տարածումներ և երկար ցիկլեր գրաֆներում
Ժ. Գ. Նիկողոսյան

Աշխատանքում քերվում է G գրաֆի ամենաերկար C ցիկլի երկարության մի գնահատական գազաթների նվազագույն աստիճանի և $(G-C)$ -ի մի բնութագրիչի օգնությամբ:

Ցիկլի տարածումներ և երկար ցիկլեր *k*-կապակցված գրաֆներում
Ժ. Գ. Նիկողոսյան

Աշխատանքում բերվում է *k*-կապակցված *G* գրաֆի ամենաերկար *C* ցիկլի երկարության մի գմախատական գազաթների նվազագույն աստիճանի, *k* բնութագրիչի և (*G-C*)-ի մի բնութագրիչի օգնությամբ:

Վիճակագրական որոշ եղանակներ, որոնք կիրառվում են ընդհանուր առողջապահական տեղեկությունների վերլուծական համակարգի ծրագրաշարում
Ա. Մ. Թադևոսյան

Հոդվածում ներկայացված է տվյալների վերլուծության վիճակագրական մի քանի մեթոդների նկարագրությունը՝ Odds Ratio, Risk Ratio, Chi Square, Fisher Exact և այլն: Այս վիճակագրական մեթոդները կիրառվում են առողջապահության ընդհանուր տեղեկատվական համակարգի բոլոր մակարդակներում, որտեղ ներդրված են առողջապահության ցուցանիշների վերլուծության ամփրամեշտ հատուկ ծրագրեր:

Հանրահաշվական բազմամակարդակային վերապայմանավորիչ կտոր առ կտոր քառակուսային մոտարկումով վերջավոր տարրերի մեթոդում
Յու. Ռ. Հակոբյան

Առաջարկվում է բազմամակարդակային վերապայմանավորիչ մատրիցների համար, որոնք առաջանում են երկրորդ կարգի էլիպտական հավասարումները վերջավոր տարրերի մեթոդով մոտարկելիս: Մոտեցման հիմքը կազմում են հիերարխիական եռանկյուն ցանցերի բազմամակարդակային տրոհումը և ներքին Չերիշկյան խտրացիաների կիրառումը: Ապացուցվում է, որ կառուցված բազմամակարդակային վերապայմանավորիչը սպեկտրալ համարժեք է սկզբնական կոշտության մատրիցային և մրա թվաբանական զինը համեմատական է հանրահաշվական խմբի չափողականությամբ:

Գումարա-տարբերակային կորիզով փաթեթի տիպի մի ինտեգրալ հավասարման լուծման թվային մեթոդը դիֆուզ սահքի խմբում
Ա. Ն. Աֆյան, Ս. Մ. Անդրիյան

Դիտարկվում է կիսատարածության մեջ զազի դիֆուզ սահքի խմբի Բուլցմանի գծայնացված ԲԳԿ (Բխատնագար, Գրոս, Կրոկ) մոդելային հավասարումը: Խմբի բերվում է Վիներ-Հոպֆի համասեռ կոմսերվատիվ ինտեգրալ հավասարմանը: